

զկուսութիւն, և լինել խոնարհ և կոյս, որպէս զի և նա պաշտպանիցէ զքեզ:

«Նաև պարտիս սիրել զնա առաւել քան զամենայն սուրբս, և առաւել պատուել զնա, և առաւել պատկառիլ ի նմանէ: Եւ ևս բազում անգամ պարտիս տալ նմա զընծայս, զի և նա բարեխօսելով վասն քոյ առ Որդին իւր միածին, ազատիցէ զքեզ ի բանտէ մեղաց, քանզի մեք որքանիցս մեղանշեմք՝ անկանիմք ի յաւիտեանական բանտն: Ուրեմն քանիցս անգամ ասես զողջոյնն հրեշտակական կամ զայլ ազօթս առ նա՝ պարտիս ջերմաւորութեամբ ասել, և այսու բազմիցս մատուցանել նմա զբազում բնծայս: Բազում անգամ ևս պարտիս ընծայ զհոգեւոր հիւանդութիւնն և զսկարութիւնն քո առաւ-

ջի նորա, և աղաչել զի բարեխօսիցէ Գրիստոսի, որպէս զի տացէ քեզ զգործութիւն և զշնորհ՝ առ ի ոչ մեղանշել. քանզի նա առաւել բազում անգամ յանդիման լինի Գրիստոսի քան զայլս սուրբս՝ առ ի բարեխօսել առ նա. ուստի այլք սուրբքն յիւրաքանչիւրում մօր մի անգամ տօնեցեալք լինին. բայց սա յիւրաքանչիւրում մօր զբեթէ քսանիցս և երեսնիցս տօնեցեալ լինի: Փանզի տօնի Յղութիւն նորին, Աւետումն, Այցելութիւն, Վերափոխումն, և այլք բազումք հանդիսութիւնք նորին:

«Ուրեմն երթ բարեպէս յանձնեա զքեզ նմա, և կոր ինչ ասացի, բարեւոք ի միտ առ, և զատարեան զասացեալն իմ, և ես ևս վկայեցից և աղօթեցից վասն քոյ»:

ԿՈՐԵԱՆ ՅԻՇԱԾՔ “ԲԱՔԻԼԱՍ,, ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

(ԵԴԵՍՒՈՅ ԲԱՔԻԼԱՍ ԿԱՄ ԲԱՔՈՒԼԱՍ ՀԱՅՐԱՊԵՏԸ)

ԿՈՐԵԱՆ զբերն մէջ յիշուած Եղեհիոյ անուանի եպիսկոպոս Բաքուլաս, որ զբըշտգրաց սխալ ընթերցմամբ ու զըութեամբ եղած է Բաքիլաս¹, և նոյն վրիպակը անցնելով Մ. Խորենացւոյ² և Ղ. Փարպեցւոյ³ պատմութեանց մէջ՝ Բաքիլոս կամ Բաքիլոս եղած⁴, — Ե զարու ասորի եպիսկոպոս ներու կարգին մէջ մեծագոյն զէմքերէն մին է, որուն վրայ կ'արժէ հակիրճ տեսնելու զեկութիւն մը տալ, մեր զբոց գիւտի պատմութեան մէջ կարեւոր դեր մը կատարած ըլլալով, և յաճախակի առնչութեան մէջ գտնուելով Ս. Սահակայ և Ս. Մեսրոպայ հետ:

Եղեհիոյ Քրոնիկոնին համեմատ, Բաքուլաս եպիսկոպոս ընտրուած է 412 թուականին: Սա հեթանոս էր, քրտմի որդի, մեծ հարստութեան և բարձր դիրքի տէր: Իմաստասիրական ուսմանց մէջ զարգացած, անկեղծ ու եռանդուն հոգի մը, հետամուտ կ'ըլլայ ճանչնալու ճշմարիտ կրօնը, և Աստուած կը լուսաւորէ անոր միտքը: Կ'երթայ Երուսաղէմ, կ'այցելէ սուրբ վայրերը, կը մկրտուի Յորդանան գետին մէջ, կը դառնայ հայրենիք, կը վաճառէ բոլոր ստացուածները ու զբամբ կը բաշխէ աղքատներուն, գերիններ կ'ազատագրէ, կը թողու՝ ընտանիք ու պաշ-

1. Կրեւն. Պատմութիւն Ս. Մեսրոպայ. Վենետիկ. 1894. էջ 18:

2. Մ. Խոր. Պատմ. Հայոց. Վենետիկ. 1827. էջ 519:

3. Ղ. Փարպ. Պատմ. Հայոց. Վենետիկ. 1878. էջ 40:

4. Այդ անուն վրիպակը անդադարձած է նաև շատ տարիներ առաջ Գլխ. Յ. Վ. Մարկուարտ (տես Հոմ. դեա Ամսոր. 1912. էջ 665):

տոն, կ'երթայ անապատներուն մէջ իր անցած կեանքը որդալու ու ապաշխարելու, խիստ ճգնութեամբ կը մահացնէ մարմինը, աղօթքով ու Ս. Գրոց ընթերցմամբ կը զօրացնէ հոգին ու միտքը, և իրեն սրբութեան ու գիտութեան համար կը տարածուի անապատներէն դուրս մինչև հեռաւոր քաղաքներ ու երկիրներ, և այդ արժանաւոր համբաւն է որ կը բազմեցնէ գինքը Եղեսիոյ պէս անուանի քաղաքի մը հայրապետական աթոռին վրայ: Այդ համբաւին արձագանգները նոյն իսկ մեր երկրին սահմաններէն ներս անցան, և մինչև Ս. Սահակայ և Ս. Մեսրոպայ ականջը հասան այն ժամանակ, երբ անոնք ուզելով թօթուել ասորի խաղտախաղտ լեզուին լուծը, ստիպուած եղան զիմելու նոյն իսկ Ասորոց՝ մեր յատուկ ազգային նշանագրերը ունենալու համար: Այս արդէն գուշակել կու տայ այն պարագան, որ երբ Ս. Մեսրոպ իր աշակերտները առած Ասորոց երկիրը անցաւ գրոց գիտին համար, նախ և առաջ գնաց ողջունելու Եղեսիոյ Բարուլաս եպիսկոպոսը՝, որ հազիւ քանի մ'ամսէ ի վեր՝ բազմած էր հայրապետական աթոռին վրայ (412-413):

Հոս անցողակի ըսենք որ, Ս. Մեսրոպայ Եղեսիա երթալու պարագան՝ մեր նշանագրերու գիւտին համար, և Բարուլասի եպիսկոպոսանալուն թուականը, երկուքն ալ պատմականօրէն ճշդուած և հաստատուած, վերջնականապէս և անվիճելիօրէն կը հասցնեն մեր Այրարեկի գիւտին թուականը մինչև 413 տարին, հակառակ ուրիշ շատ ազգային կամ օտարազգի բանասէրներու յայտնած կարծիքին, որոնցմէ իւրաքանչիւրը՝ հիմնուած այս կամ այն փաստին վրայ՝ կ'իջեցնէ կամ կը բարձրացնէ այդ թուականը 402էն մինչև 410: Օրինակ, Դ. Կ. Ս. Մարկուարտ՝

կը զնէ գրոց գիւտը 402/3ին, հիմնուած կորեան հետեւալ խօսքերուն վրայ, հարկ տեսնելով սակայն սրբագրելու անոր մէկ թուականը. «Եւ արդ առնու համար ամաց « սրբոց հաւատոց ի չորրորդում ամէն « կրմանայ արքայի մինչև ցառաջին ամն « երկրորդ Յազելեաթի որդւոյ վճամայ, և « ղպորեանն Հայոց յարկորդ ամն Յազելեաթ « տի ոսեայ սկիզբն »: Վերջին պարբերութեանս ուրիշորդ (Ը) կը սրբագրէ հիւնդերդ (Ե), Ուրիշներ կը զնեն 404ին, ինչպէս Հ. Գարբ. Ե. Նահապետեան, նկատելով որ գրոց գիւտը պատահեր է Ս. Մեսրոպայ մահուանէն 35 տարի առաջ, հիմնուած նոյնպէս կորեան յաջորդ խօսքերուն վրայ. «Ի ղպորութենէն Հայոց մինչև ցվախճան սրբոյն՝ ամք երեսուն և հինգ »: Անտառակոյս շատ ճիշդ և տրամաբան է Հ. Նահապետեանին հանած եզրակացութիւնը, եթէ « ղպորութիւն Հայոց » բառերով հասկընանք իրօք Մեսրոպեան և ոչ Դանիէլեան գրոց գիւտը: Ուրիշ բանասէրներ կը զնեն հաւանօրէն 406ին, ինչպէս Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, կամ 408ին, ինչպէս Հ. Չամչեան, և վերջապէս ուրիշներ կը հասցնեն մինչև 410, ինչպէս Հ. Գարեգին Վ. Ջարրահանալեան՝:

Սակայն ինչպէս հաշտեցնել այդ թուականները այն պատմական եղելութեան հետ, որ Բարուլաս 412էն առաջ եպիսկոպոս չէր, և հակասած պիտի ըլլանք Կորեան բացայայտ վկայութեան, թէ Ս. Մեսրոպ գրոց գիւտին առթիւ Եղեսիա և Ամիդ երթալով, « ընդդէմ լինէր սուրբ « եպիսկոպոսացն, որոց առաջնոյն Բարիլաս « (Բարուլաս) անուն »: Եթէ կարելի է Դ. Կ. Մարկուարտի պէս այդ թուականներէն մին կամ միւսը փոխել կամ սրբագրել, ինչպէս իրօք պէտքը կը զգացուի, օր. իմն, կորին՝ Դանիէլեան նշանագրերուն գիւտը պատմած ատեն՝ կ'ըսէ. « Իսկ

1. Կորեան. էջ 18.

2. Հանգ. Ամսորեայ. 1912, էջ 665.

3. Կորեան. էջ 48.

4. Անգ. էջ 48.

5. Պատմ. Հայկ. Հիմն ղպորեանն. Հ. Գար. Ջարր. Վենետիկ. 1897. էջ 67.

6. Կորեան. էջ 18.

«Հաբեիին (մերձաւոր Դանիելի ասորւոյ)
«զայն լուեալ, փութանակի հասանէր առ
«Դանիէլէն... և առեալ ի նմանէ (զնշանա-
«գիրն) առաքէր առ արքայն (Վաւաշապուհն)
«յերկիրս Հայոց, ի հիւնգերորդի ամի թա-
«գաւորութեան նորա՝»։ Ս. Մեսրոպ երկու
ասարի կ'աշխատի օգտակար ընել այդ
գիրքը, «Իբրև ամս երկու կարգեալ զվար-
«դապետութիւն իւր, նովին նշանագրովք
«տանէր իսկ իբրև ի վերայ հասեալ թէ
«չեն բաւական նշանագիրքն ողջ ածել
«զսիւղորդայս և զկապս հայերէն լեզուսն՝»,
ճարահատ, Վաւաշապուհն թագաւորին և
Ս. Սահակայ հրամանով կը ստիպուի
անձամբ Ասորիք երթալ զրոց գիւտին հա-
մար, և այս կը պատահի դարձեալ Վաւա-
շապուհն թագաւորին հինգերորդ տարին.
«Խաղալոր գնալը (Մաշթոց) ի հիւնգերորդ
«ամի Վաւաշապուհն արքային Հայոց, և եր-
«թեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի
«քաղաքս երկուս Ասորոց՝»։ Բնական չէ՞
որ այս երկրորդ հիւնգերորդը (Ե) արքա-
գրութի և ըլլալ եօթներորդ (Է) կամ ուրե-
րորդ (Ը)։ Սակայն անկարելի է փոխել
կամ սրբագրել ըստ ըմբս պատմական եւ
ղեւուծիւն մը, որ դրական փաստերու
վրայ հաստատուած է։ Կ'արժէ ուրիշ ան-
գամ դանդաղ այս խնդրոյն, աւելի լրջօ-
րէն և փաստացի քննելու և եզրակացու-
թեան մը յանգելու։

Բարուլաս՝ Եփեսոսի ժողովին (431ին
գումարուած) նշանաւոր Հայրերէն մին
եղաւ, Նեստորի աղանդին դէմ անպար-
տելի ախոյեան մը, խօսքով ու զրով ջախ-
ջախիչ հանդիսանալով թէոգորոսի Մոպ-
սուեստացւոյ մոլորութեանց, որոնք Ասո-
րիքէն տարածուելով՝ մուտ գտան մինչև
Պարսկաստանի և Հայաստանի սահման-
ները։ Ճիշդ այդ առթիւ էր՝ որ Բարուլաս
և Մելիտիոնի Ակակ եպիսկոպոսը նամակ
մ'ուղղեցին առ Ս. Սահակ, յորդորելով
զինքը որ զգուշացնէ իր հօտը ու եկե-

ղեցին Նեստորի և մասնաւորապէս Թէո-
դորի Մոպսուեստացւոյ մոլորութենէն ու
հետեւողներէն։ Այդ նամակին պատասխանը
կը գտնենք Ս. Սահակայ թղթոց կարգին
մէջ, ուր հիանալի աստուածաբանութեամբ
և պարզ ու մեկին բառերով բացատրա-
տուած է Հայաստանեայց եկեղեցւոյ ուղիղ
դաւանութիւնը, գրեթէ յար և նման առ
Ս. Պրոկոս ուղղուած նամակին, ուր կայ
հետեւեալ բացատրութիւնը. «Եւ որ Դիո-
«դորեայ Մասիստրացւոյ (ուղղէ՝ Թեոդորի
«Մոպսուեստացւոյ) աշակերտեալք իցեն, առ
«ժամանակս ի շնորհացն Աստուծոյ այնպի-
«սի ինչ չև է յայտնեալ՝»։

Հայաստան և Ասորիք, երկուքն ալ
գերագանցօրէն քրիստոնեայ երկիրներ,
երկուքն ալ ղժարխտարար քաղաքական
մի և նոյն պայմաններուն մէջ, մեծագոյն
մասամբ հարկատու և հպատակ պարսիկ
պետութեան, ստէպ բուն և արիւնդուշտ
հալածանքներու ենթարկուած, անոր մեղկ
և թոյլ բարոց և սովորութեանց աղետալի
ազդեցութիւնը կրած են։ Եւ այսպէս կ'ու-
նենանք առջևնիս այն տրուր պատկերը՝
որով կը ներկայանայ մեզի քրիստոնէու-
թիւնը Ե. զարու առաջին կիսուն թէ՛
Հայաստանի և թէ՛ Ասորիքի մէջ, ինչպէս
կարելի է գուշակել Ս. Սահակայ և Բա-
րուլասի կանոններէն։ Այդ երկու մեծ
գէմքերը՝ Սահակ և Բարուլաս, իրենց
գրական և ընդհանուր գործօնէութեան
մէջ, ինչպէս նաև իր բարենորոգիչներ՝
համեմատութեան շատ կէտեր ունին։ Մարդ
երբ քաղաքատէ սղոնց եկեղեցական կա-
նոնները, կը տեսնէ որ նոյն հոգին և
նոյն աստուածային նախանձն է՝ որ կը
զրդէ զանոնք ուղղելու իրենց հօտին և
մահաւանդ եկեղեցականներուն մէջ սպրը-
ղած անկարգութիւնները։ Երկուքն ալ
սուր և արթուն միտքեր, կ'ըմբռնեն իրենց
կղերին ինկած վիճակը կանգնելու և վե-
բանորոգելու անհրաժեշտ պէտքը, որուն

1. Արիւն. էջ 17.

2. Արիւն. էջ 18.

3. Արիւն.

4. Ստեփան Հայկ. Բ. էջ 148.

համար հարկ էր զարգացնել անոնց մէջ հաւասարապէս ուսումը, բարոյականը և կրօնը: Ամէն կարելի միջոց և անաշատ խստութիւն ի գործ կը դնէն ժառանգաւորաց ընտրութեան համար: Սակայն այդ մասամբ, պէտք է ըսել որ, շատ աւելի խստապահանջ էր Ս. Սահակ իր կղերին հանդէպ, չի խնայելով նոյն իսկ եպիսկոպոսներուն՝ որոնք զանցառու կը գտնուէին իրենց աստիճանին պարտուց մէջ: Բարւսեղ մը, Ոսկեքերան մը, աւելի իրիստ լեզու պիտի չի գործածէին իրենց ենթակարգեալ պաշտօնէից հետ, ինչ որ կը գործածէ Ս. Սահակ եպիսկոպոսներուն, երբ ասոնք պէտք եղած փոյթը և խնստութիւնը չէին ընէր եկեղեցւոյ պաշտօնէից ընտրութեան մէջ: «Պուք յընչաւ» «սիրութիւն և ի կնշառս կործանիք», — կը «գոչէ անոնց երեսն ի վեր», — զգարընէին «և զպատուիրանազանցսն, և զգինուորսն «և զտգէտսն հաւատարմով համարիր ի գործ «սպասաւորութեան Եկեղեցւոյ, և ջոյլը «ևս յաճախեալ տողէք զկնի ձեր զմիշտաւ «ուրացն անուանելոց»՝: Կը պահանջէ որ ժառանգաւորը ո՛չ միայն բարբոյ և վարբոյ արժանաւոր ըլլան, այլ նաև ուսումնասէր և հմուտ եկեղեցական գիտութեանց, «Պար» «տի հրաման տալ և կարգել տեսուչ քորե» «պիսկոպոսն, զլաւս և զաջողակ» պատուոյ «և մեծարանաց առնել արժանի, և զան» «պիտան» խոշտանգանաց, մանաւանդ զու» «սումնատեացսն, զի որ կամակորէ յու» «մանէ՛ անկանի չարիս ըստ զընցելուսն»՝: Ինչ որ ներկայապէս Արևմտեան Եկեղեցւոյ մէջ գեղեցիկ սովորութիւն է, որ ամէն եպիսկոպոս իր թեմին մէջ ժառանգաւորաց վարժարան մ'ունի կղերուոց (seminarium) կոչուած, որ մեր մէջ Դպրոց կամ Դպրավանք կ'ըսուի. շատ կանուխէն զգացած էր Ս. Սահակ անոր պէտքը, և կը պատուիրէ քորեպիսկոպոսներուն որ ամէն հոգ ու փոյթ տանին

անոր՝ արժանաւոր և ընտիր եկեղեցականներ պատրաստելու համար. «Վասն որոյ «անընդհատ պարտի (քորեպիսկոպոսն) պա» «հել յարդարուն զղպրոցն, ի վասն և «յայլ արժանաւոր տեղիս, զի լուսաւո» «րեալը լուսով պատուիրանացն Աստուծոյ՝ «զամենեսեան լուսաւորեսցեն. քանզի յոր» «ժամ Ուխտն՝ որ զլուին է եկեղեցւոյ՝ «ընտիրք և պիտանիք լինիցին, ևս առաւել «ժողովուրդն»՝: — Չեմ ուզեր հոս յիշել մի առ մի այն բոլոր գեղծումները՝ որոնք մուտ գտած էին հայերուն և ասորինս» ըսն մօտ, որոնց դէմ կը մարտախիլ երկու յիշեալ Ս. Հարք արմատախիլ ընելու, ինչպէս էր, օրինակ իմն, տեսակ մը օրհնուած ձէթով օծումը հիւանդներուն՝ բժշկութեան նպատակով, զոր պէտք չէ շփոթել վերջին օծման խորհուրդին հետ. առաջին օծումը կ'ընէին նաև աշխարհականը, մինչ երկրորդը կը մատակարարէին միայն քահանայք: Այսպէս նաև, ասորեոց մօտ, կարգ մը աշխարհիկ հաւատացեալներ կը յանդգնէին իրենց վրայ կրել ու շրջեցնել Հաղորդութեան Ս. խորհուրդը՝ բաշխելու համար որոնց որ հարկաւոր կը տեսնէին: Բարուլաս ամենախիստ բարեբոյ կը սաստէ ու կը դատապարտէ ազոնց անպատկառ համարձակութիւնը, իսկ հայերուն մօտ, քահանայիցմէ ոմանք նոյնպէս Ս. խորհուրդը տունէ տուն կը շրջեցնէին, հաղորդելու համար հաւատացեալները՝ կ'ենթադրուի ծանր հիւանդութեան պարագայէն դուրս, որոնց դէմ ուժգին կ'որոտայ Ս. Սահակ. «Արտառոյ «եկեղեցւոյ քահանայք մի՛ իշխեսցեն օրհն «ի տունս շինականաց տանել, և անդ տալ «զարբութիւն՝ բայց միայն հիւանդաց»՝: Ասոնց կարգէն է նաև այն սրբապիղծ գեղծումը, որով եկեղեցւոյ սրբազան սպասները կը գործածէին արտաքին կամ անասուրբ պէտքերու, որոնց համար արգար զայրութիւն կը գրէ Ս. Սահակ.

1. Կառնք Ս. Սահակայ. Սոփերք Բ. էջ 77,
2. Կառնք Ս. Սահակայ, Սոփերք Բ. էջ 84.

3. Անդ. էջ 85,
4. Անդ. 94.

« Լսեմք թէ զեկեղեցւոյ սպաս՝ մանաւանդ
« զվարարգոյր՝ ի հարսանիս առաքաստի փե-
« սայի և հարսին, և զսկիհն ի զինքմպելիս
« յանօթս տան զինուորաց, վասն որոյ
« արժան է զքահանայն զայն խել ի կար-
« զէն իւրմէ վասն այդպիսի խառնակ և
« չար գործոցն»՝ և ևն:

Ուրիշ տարօրինակ զեղծում մ'ալ մուտ
գտած էր Perrha քաղաքին ասորի վա-
նականներուն մէջ, որոնք այնպիսի ծա-
րայեղութեան տարած էին ծովապահու-
թիւնը, որ ո՛ր է մնունդ կամ կերակուր
չէին առնել, և ո՛չ իսկ հաց կամ ջուր,
որոնցմէ ամենախիստ ճգնաւորներն ան-
գամ չէին զրկել իրենց զիրենց: Բայց
որովհետեւ հարկ էր որ ապրէին, այդ
տարօրինակ վանականները կ'երազէին
ապրիլ միայն Ս. Հաղորդութեան խոր-
հրդով, « իրենց քաղցն ու ծարաւը յա-
գեցնելով նոյն իսկ Քրիստոսի մարմնով
և արեամբ, երկու՝ երեք անգամ հաղոր-
դուելով մի և նոյն օրուան մէջ», ինչպէս
կը կարգանք Բարուլասի թղթոյն մէջ
առ Փամալինոս, որ յիշեալ քաղաքին
թեմական էր: Այդ խելայեղ վանական-
ները զո՛հ չըլլալով բաղարջ հացով, նախ
կը խմորէին և յետոյ կը սրբագործէին:
Բարուլաս իր յիշեալ նամակին մէջ այնպի-
սի բառերով կը յանդիմանէ և կը պարսաւէ
խմորեալ հացին գործածութիւնը, որ ցոյց
կու տայ յայտնապէս թէ այն դարուն
ասորի եկեղեցւոյն մէջ բաղարջ կը գոր-
ծածուէր իբր նիւթ Ս. Խորհրդոյն: Այս
կէտը մտածել կու տայ, որ եթէ ասորա-
կան եկեղեցին այդ սովորութիւնն ունէր
Բարուլասին ժամանակ և անշուշտ անկէ
առաջ ալ, մեր հայկական եկեղեցին, որ
ծիսից ու արարողութեանց մէջ շատ աւելի
մերձաւոր էր ասորականին քան յունա-
կանին, և նոյն իսկ մեր գրոց գիւտէն
առաջ ասորի լեզուով կ'ըլլային բոլոր
պաշտամունք, երգեցողութիւնը և ընթեր-

ցուածք, ինչպէս կը վկայեն մեր պատ-
միչը՝, արդեօք ասորի եկեղեցիէն առած
չէ՞ բաղարջը գործածութիւնը պատարա-
զի սուրբ Խորհրդոյն մէջ:

Այս նկատմամբ կարելի չէ՞ ընդունիլ
ոմանց կարծիքը, իբր թէ Հայք Քաղկե-
դոնի ժողովէն վերջ է՝ որ թողուցած
ըլլան խմորեալ հացին գործածութիւնը և
անոր փոխանակած բաղարջը, Յոյներէն
տարբերելու համար: Հայերը այնքան փա-
րած ու կառչած էին իրենց հին աւան-
դութեանց և ծէսերուն, ինչպէս նաև իրենց
Ս. Հաղորդուն յիշատակին, որ կարելի
չէ՞ թէ պարզ քմահաճոյցով մը փոխած
ըլլան աւանդութիւն մը, որ գրեթէ հա-
րիւր յիսուն տարիներու հնութեամբ մը
նուիրագործուած էր, ևս աւելի Ս. Գրի-
գոր Լուսաւորչէն հաստատուած և անոր
պանծալի յաջորդներէն յարգուած և պա-
հուած: Ընդ հակառակն ես կը համարիմ
որ բաղարջին գործածութիւնը առնուած
ըլլայ ուղղակի ասորական եկեղեցիէն,
նոյն իսկ Ս. Լուսաւորչի ժամանակէն,
ինչպէս առնուած են անկէ ուրիշ շատ
եկեղեցական սպասներ և սովորութիւններ,
քանի որ մանաւանդ, ինչպէս ըսինք, մինչև
գրոց գրուող ասորի լեզուով կ'ըլլային
ամէն եկեղեցական պաշտամունք, հետեւա-
բար նաև պատարագը: Այս մեր կարծիքը
հաստատել կ'երեւի նաև Յովհաննէս Օմնե-
ցին իր բարձր հեղինակութեամբը, երբ
կ'ըսէ իր կանոններուն մէջ. « Արժան է
« և զհացն՝ անխմոր... հանել ի սուրբ
« սեղանն, ըստ աւանդելոյն մեզ սրբոյն
« Գրիգորի, և ոչ խոնարհել յայլ ազգաց
« քրիստոնէից յաւանդութիւնս»՝: Յամե-
նայն դէպէ՞ լուրջ ըննութեան և ուսում-
նասիրութեան կէտ մ'է այս:

Բարուլաս իր երկար, արդիւնաւոր և
յուզումնալից կեանքը վերջացուց 435ին,
երբ արդէն քիչ շատ խաղաղած էր քրիս-
տոնեայ աշխարհը Նեստորի աղանդին յա-

1. Կանոնք Ս. Սամեայ. Սփեքք Բ. էջ 93.

2. *Mélanges d'hist. religieuse*, par P. Lagrange. Paris. V. Lecoffre. 1915. էջ 203.

3. Ղ. Փարպ. Պատմ. Հայոց. վճեհով. 1873 էջ 36.

4. Յովս. Օմնեցի. Կանոնք. վճեհով. 1883. էջ. 60

րուցած փոթորիկներէն, Սակայն զօրախա-
տարար Եղեսիա նորանոր յուզումներով
աղմկեցաւ, երբ անարժան իրասը բար-
ձրացաւ եպիսկոպոսական աթոռին վրայ,
էս հոս Բարուլասի կեանքին մէկ երկու
գրծերը միայն մէջ բերի, որոնք սերտ
առնչութիւն մ'ունէին մեր պատմութեան
հետ, շատ զօրաւ ըլլալով կարենալ հոս
բազմակողմանի գործունէութիւնը պատկե-
րացնել այս քանի մ'էջներուն մէջ, որով
հարկ պիտի ըլլար նաև նիւթէն դուրս
ելլել: Սակայն այս մեծ դէմքը, ծածկուած
դարերով սխալ անուան տակ, հետևարար
շատ քիչ ծանօթ մերիններուն, ոչ միայն
հիացում կ'ազդէ մեզի, այլ և հմայիչ և
համակրելի կը դառնայ, երբ մոտածնէր որ
ինքն եղաւ առաջին անգամ որ հիւրասի-
րեց Ս. Մեսրոպ և իր աշակերտները
Եղեսիոյ մէջ, «բազում մեծարանք ցու-
ցեալ հասելոցն», երբ անոնք օտարու-
թեան մէջ կը տառապէին, — ինքն եղաւ
որ քաջաբերեց զՄեսրոպ, օգտակար խոր-
հուրդներ տուաւ և յանձնարարական գրով
ուղարկեց Սամուստ քաղաքը, ուր նոյն-
պէս «մեծապատիւ յեպիսկոպոսէն և յե-
կեղեցւոյն մեծարեալ լինէր»: Յետ գրոց
սընդհելի գիւտը ձեռք բերելու, և անով
Սողոմոնի Առակաց քրքին անդրանիկ
թարգմանութիւնն ընելու, երբ Մեսրոպ
դարձաւ նորէն Եղեսիա առ Բարուլաս,
սա անհուն հրճուանքով ընդունեցաւ զինքը,
և խնդակցութեան թուղթեր յանձնելով
տանելու առ Ս. Սահակ, սիրով և պա-
տուով ուղարկեց զինքը Հայաստան:

Վերջին անգամ մ'ալ կը տեսնենք Բա-
բուլաս իր բարձրութեան մէջ այն պա-
րագային, երբ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ
իրենց աշակերտներէն երկու յառաջադէմ-
ները, Յովսէփ Պաղնացի և Եզնիկ Կող-
բացի, Եղեսիա կը զրկեն՝ ասորի Ս. Հարց
գրեքը թարգմանելու և իրենց զրկելու:
Աւելորդ է ըսել թէ Բաբուլաս ինչ սէր
և հայրական գուրգուրանք ցուցուց այդ
աշակերտաց, իրեն խնամոց յանձնարա-
րուած ըլլալով իրենց սուրբ Վարդապետ-
ներէն: Ինքն էր որ բանալ տուաւ անոնց

առջև Եղեսիոյ դիւանները, զրաւ առջևին
ասորի Ս. Հարց գրութիւնները, հար-
թեց զօտարութիւններ, լուծեց լեզուական
կնճիռները, մոյց, հիւրընկալեց ու խնա-
մեց զանոնք իրը իր սաները, որոնք ասորի
մատենագրութեան հրաշակերտներէն ծու-
լեցին հայերէն լեզուի հրաշակերտներ:

Հ. ՅՈՂԱՆ. Վ. ԹՈՐՈՍԵԱՆ

ԱՎՆԱՐԿ ՄԸ

«ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ» Ի

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՃԻՒԴԻՆ



ՈՐՔԱՆ որ Եզնիկ ուղղակի բնական
գիտութեան վերաբերեալ գրութիւն մը չէ
թողած մեզ, սակայն բաւ է քիչ մը ու-
շադիր դիտել և իսկոյն պիտի ցոլանայ
ոսկեմատեան «ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ» ին մէջ
հեղինակին բնագիտութեան վրայ ունեցած
մեծ հմտութիւնը:

Կողբացին ինչպէս յայտնի է վերոյի-
շեալ գրքոյկէն՝ ոչ միայն աղբիւրի դիմող
ծարաւի եղջերոսի նման արբեր և մինչև
ցվերջին կաթիլ ծծեր է Արիստոտէլներու
ու Պլատոններու, Եպիփաննիոս և Ռսկե-
րերաններու գրեանքը, այլ և երկինքը ու
երկիրը և բոլոր բնութիւնը՝ իրեն բաց մա-
տեան մը կարդացեր է. որոնցմէ անխտրի
հաստատ համոզմամբ կ'ապացուցանէ և
կը հաստատէ բոլոր իւր վարդապետու-
թիւնը:

Եզնիկայ բնական գիտութեանց բաժինը
երկու մասի կընանք վերածել.

Ա. Երկրայինը (բուսաբանական, կեն-
դանաբանական են):

Բ. Երկնայինը (այն է՝ աստղաբաշխա-
կան):

Թողունք առ այժմ այս երկնայիններն՝
աստղերն ու արեգակը, որք ըստ իր
գեղեցիկ բանաստեղծական նմանութեան՝
«Իբրև ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձե-